ԱՌԱՔԵԼ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՈԳԵԿԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹ

Հայտնի է, որ մտածողության ուսումնասիրության առավել բարդ հոգեբանական պրոբլեմներից է մտածողության մեջ արտաքինի և ներքինի հարաբերակցության պրոբլեմը: Ցանկացած գործունեության, ցանկացած խնդրի լուծման մեջ կան ինչպես արտաքին, այնպես էլ ներքին բաղադրիչներ: Ընդ որում, մտածողության գործընթացների և կառուցվածքների հետազոտությունը պայմանավորված է ոչ միայն զուտ տրամաբանական-փիլիսոփայական, այլև գործնական-կիրառական նկատառումներով (կիբեռնետիկա, մաթեմատիկա և այլն): Այնուամենայնիվ, հոգեբանական գիտության մեջ դեռևս չկան ուղեղի աշխատանքին վերաբերվող բազմաթիվ հարցերի պատասխանները: Օրինակ՝ 1)ինչպե՞ս է ուղեղը մշակում ինֆորմացիան, 2)ինչպիսի՞ն է ուղեղի կողմից իրականացվող օպերացիաների տրամաբանությունն ու մեխանիզմները, 3)ինչպիսի՞ ներհոգեկան գործընթացների արդյունքում է ձևավորվում պրոբլեմային իրադրության լուծման ստրատեգիան և դրանում ի՞նչ դեր են կատարում չգիտակցված դրդապատճառները և այլն:

Այսօր գիտնականները Տիեզերքը նկարագրում են հիմնականում երկու մասնակի տեսությունների՝ հարաբերականության ընդհանուր տեսության և քվանտային մեխանիկայի օգնությամբ, որոնք 20-րդ դարի առաջին կեսի մարդկային մտքի խոշորագույն նվաճումներն են: Գերիշխում է Տիեզերքի ինքնազարգացման կամ Մեծ պայթյունի վարկածը, սակայն դեռևս չկան մի շարք էական հարցերի պատասխանները. ա)ինչպե՞ս է Տիեզերքում, մատերիայի գոյության բոլոր ձևերում «ներմուծվել» այդ ինքնազարգացումն ապահովող հակասականությունը, բ)ինչու՞ և ինչպե՞ս ձևավորված հակադիր բևեռները գտնվում են նաև միասնության մեջ՝ ապահովելով մատերիայի ձևերի որակական որոշակիությունն ու ամբողջականությունը, գ)ինչպե՞ս է ահավոր մեծության գրավիտացիան (նախասկզբնական միջուկը) հաղթահարվել՝ առաջ բերելով տարացրում, և այլն:

Այնուամենայնիվ, գիտության նվաճումները հաստատում են, որ մարդն իր բանականությամբ ի վիճակի է արտացոլելու ոչ միայն երկրային, այլև ողջ

Տիեզերական համակարգության օբյեկտիվ օրինաչափությունները, բացահայտել էական կապեր և հարաբերություններ, որոնք գործում են ողջ Տիեզերքի կամ գոնե նրա՝ մեզ հայտնի տիրույթի վրա: Այսինքն՝մարդկային հոգեկան արտացոլումը ոչ միայն երկրային, այլև տիեզերական երևույթ է, ուստի և, բնականաբար, այն լիարժեքորեն կարելի է հասկանալ և բացատրել միայն Տիեզերական համակարգի օրինաչափությունների և զարգացման դիալեկտիկան ըմբռնելու դեպքում: Իր հերթին՝ հոգեկան արտացոլումը որպես մատերիայի զարգացման բարձրագույն դրսևորում իր մեջ պարփակում է Տիեզերական օրինաչափությունների բացահայտման բանալին, ոչ միայն այն պարզ պատճառով, որ մարդկային միտքը, բանականությունն է ճանաչողության միջոցը, այլև այն պատճառով, որ որպես արտացոլման բարձրագույն դրսևորում՝ մարդկային հոգեկանը, մտածողությունը որպես այդպիսին կայացել է՝անցնելով դիալեկտիկական բացասումների աներևակայելի բարդ մի շղթա, որի յուրաքանչյուր օղակը մարդկային հոգեկանում թողել է իր հետքը և որոնց բացահայտումը այն ուղին է, որով կարելի է հասկանալ դրանց ծնող պատճառները:

Ակնհայտ է, որ մտածողության պրոբլեմը լիարժեք հասկանալու համար սկզբունքային նշանակություն ունի հոգեկան արտացոլման ծագման նկատմամբ որոշակի մոտեցումն ընդհանրապես: Այս առումով, մեր համոզմամբ, սահմանափակ են նաև վերացական մտածողության պրոցեսի հիմքը հանդիսացող հասկացությունների ծագման վերաբերյալ գոյություն ունեցող մեկնաբանությունները (սա առանձին և հանգամանալից ներկայացման կարիք ունի): Մեր մոտեցմամբ՝ հոգեկան արտացոլումը և դրա բարձրագույն դրսևորում հանդիսացող գիտակցությունը ըստ էության մատերիայի ինքնաբացասումն է: Այսինքն՝ մատերիան մարդու մեջ և մարդու մակարդակում ձեռք է բերում նոր որակ՝ գիտակցություն, որը ներկայացնում է նյութի առաջին բացասում, նյութականից հոգեկանի՝ իդեալականի անցում: Նյութականը, մատերիականը գիտակցության մեջ բովանդակայինն է, այն՝ ինչ պայմանավորվում է օբյեկտիվ իրականությամբ: Դրանք առաջանում են հոգեկան արտացոլման շնորհիվ, վերագրվում են նույն իրականությանը և զարգացման որոշակի աստիճանում ինքնուրույն գոյություն ձեռք բերում շնորհիվ հենց իրականությունից մակածված լինելու: Նման ծագում ունեն մարդկային հոգեկանի այն բովանդակությունները, որոնք ձևավորվում են իմացական գործընթացների արդյունքում: Այս իմաստով, իհարկե, հոգեկանը ունի մատերիական հիմքեր: Սակայն հոգեկան արտացոլումն օնտոգենեզում ձեռք է բերում նաև նոր որակներ, որոնց կապը մատերիական հիմքերի հետ

միջնորդավորվում են այնպիսի մեխանիզմներով, որոնք ինքնին հոգեկան արտացոլման ենթակա չեն (դաշտ, իզոմորֆ մեխանիզմներ և այլն): Նման մեխանիզմներով ստացվող հոգեկան բովանդակությունների կապը օբյեկտիվ իրականության հետ ունենում է բազմակի վերցարկվածություն: Այդպիսի հասկացություններով գործառնելիս մտածողությունն էապես հեռանում է իր մատերիական հիմքերից և որոշակիորեն արտացոլում է բուն ներհոգեկան պրոցեսներն իրենց ոչ թե բովանդակային, այլ էներգետիկ բնութագրերով: Օրինակ, տարածության և շարժման զգայությունները ունեն արտացոլման մատերիական հիմքեր, սակայն դրանց զարգացման որոշակի աստիճանում ձևավորվող ժամանակի զգացողությունն արդեն նոր որակ է, որը հարաբերական է՝ կախված հաշվարկային համակարգի ընտրությունից, անձի հոգեվիճակից և այլ գործոններից: Իր հերթին ժամանակի զգացողությունն արդեն հետադարձ ազդեցություն է գործում հոգեկան արտացոլման մյուս գործընթացների վրա՝ արդյունքում ի հայտ բերելով ժամանակի սուբյեկտիվ ընկալումների լայն սպեկտր: Մյուս կողմից՝ հարաբերականության ընդհանուր տեսությունից հետևում է, որ ժամանակի զգացողությունը էապես պայմանավորված է ողջ Տիեզերքին հատուկ գրավիտացիայի համընդհանուր երևույթով: Փաստորեն, գրավիտացիան որոշակի իզոմորֆ մեխանիզմներով հանգեցրել է մարդկային հոգեկանում ժամանակի արտացոլման մեխանիզմի ձևավորման, որն իր հերթին հետադարձ հսկայական ազդեցություն է ունենում մարդու իմացական պրոցեսների ընթացքի և նույն գրավիտացիայի Տիեզերական հետևանքների գիտակցման վրա... Ստացվում է դիալեկտիկական հակադրամիասնություն, որն արտաքուստ դրսևորվելով որպես իրականության ճանաչողություն՝ ներհոգեկանում իզոմորֆ է մտածողության պրոցեսին (գիտակցությանը, որպես գիտակցված գոյ):

Մտածողությունը որպես պրոցես ունի բազմաֆունկցիոնալ ծավալման միտում: Այսինքն, որպես հոգեկան պրոցես այն միտում ունի ընթանալու տրված նախադրյալների օբյեկտիվ և սուբյեկտիվ նշանակությունների զուգորդական-անալոգիական և տրամաբանական գործառնությունների բոլոր հնարավոր կոմբինացիաներով (միտքը ազատ է իր էությամբ): Սակայն այդ նպատակի համար օգտագործվող գիտական հասկացությունների, սիմվոլների հետ միաժամանակ մտածողությունն օգտագործում է նաև լրացուցիչ-սպասարկող, կամ տրամաբանական գործառնությունների իրականացմամբ պայմանավորված այնպիսի հասկացություններ, որոնցից շատերը այժմ էլ դեռևս չունեն օբյեկտիվացված գիտական ճշգրիտ իմաստ: Օրինակ, բառերով արտահայտվող մարդկային գիտակցությունն ի վիճակի չէ միարժեքորեն բնութագրելու

«անսահմանություն» հասկացությունը, քանի որ ըստ էության դա ընկալվում է որպես սահման չունեցող, որը սակայն ոչինչ չի ասում «անսահմանություն» հասկացության էության մասին: Փաստորեն մարդկային միտքն առանց ապացուցման ելնում է այն դիրքորոշումից, որ սահման չունեցող վերջավորը անսահմանություն է, որով անտեսվում է քանակական փոփոխությունից որակականի անցման, չափի խզման, թռիչքի պահը, որի հետևանքով նախկին, արդեն հայտնի չափանիշները կիրառվում են նոր որակի նկատմամբ: Նման դեպքերում ըստ էության լուծելով դրված խնդիրը, մարդկային մտածողությունը՝ ունենալով իրականության մեջ օբյեկտիվ հիմքեր, գործում է ներհոգեկան հակասությունների առկայության իրավիճակում: Ուստի, պրոբլեմային իրադրության առաջին իսկ պահից նոր ընկալված ինֆորմացիան գտնում է այնպիսի ներհոգեկան իրավիճակ (միջավայր), որում կարող են ծագել մտածողության ամենահնարավոր ընթացքներ (տարբերակներ): Այսինքն, թեև հոգեբանական գիտության մեջ իրավացիորեն ընդունված է, որ դրդապատճառների ոլորտի, մտածողության և գործունեության զարգացումն է այն ներքին անհրաժեշտ պայմանը, որով պայմանավորվում է հոգեկան զարգացումը, սակայն դրդապատճառների հիմքում ընկած են անձի ինչպես գիտակցական, այնպես էլ ենթագիտակցական և անգիտակցական պահանջմունքներ, որոնց մի զգալի մասի հիմքում՝ վերջին հաշվով, ընկած են Տիեզերական օրինաչափություններ ու մեխանիզմներ:

Այսպիսով, հոգեկան արտացոլման ձևավորման պրոցեսում դիալեկտիկական փոխներգործության մեջ են գտնվում ոչ միայն կենսաբանական և սոցիալական, այլև Տիեզերական գործոնները, որոնց արդյունքում էլ ձևավորվում է ինչպես ժամանակի արտացոլումը, այնպես էլ արտացոլման այնպիսի բարձրագույն ձև, ինչպիսին է մտածողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեֆըն Ու.Հոքինգ, ժամանակի համառոտ պատմություն, Երևան, 2001.
2. Брушлинский А.В. Психология мышления и проблемное обучение. М.,1983.
3. Вертгеймер М. Продуктивное мышления, М.,1987.
4. Дункер К. Психология творческого продуктивного мышления (под ред. А.М.Матюшкина). М., 1965, с.86-234.
5. Леонтьев А.Н. Проблемы развития психики, М., 1981.
6. Лук А.Н. Психология тборчества, М., 1978.
7. Пушкин В.Н. Некоторые проблемы современной психологии мышления, М., 1971.
8. Рубинштейн С.Л. О мышлении и путях его исследования, М., 1958.
9. Физическая энциклопедия, Т.1, М.,1988.
10. Чудаков В.Н. Физико-математические основы теории мышления, Харков, 1977.